

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2017 թ-ի օգոստոսի 30-ին կայացած
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2017-18 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելություն;
2. Ուսումնական հարցեր.
ա/ ֆակուլտետի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության մասին,
բ/ մագիստրոսական թեզերի գնահատման նոր կարգը,
գ/ ավարտական և կուրսային աշխատանքների մասին,
դ/ բակալավրիատի նոր ուսումնական պլանների կազմման գործընթացը;
3. ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին ֆակուլտետի մասնակցությունը;
4. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունների քննարկում և առաջադրում;
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ 2017-18 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչներ՝ Ս.Զաքարյանը, Գ.Շահվերդյանը, Ն.Խաչատրյանը: Նշվեց, որ ֆակուլտետում ընդունելության արդյունքները գոհացուցիչ են, մագիստրատուրայի բոլոր մասնագիտացումները բացված են:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Ուսումնական տարբեր հարցերին վերաբերող տեղեկատվություն. դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության, մագիստրոսական թեզերի գնահատման նոր կարգի և բակալավրիատի նոր ուսումնական պլանների մասին:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության հարցը, մագիստրոսական թեզերի ընդդիմախոսության նոր կարգի, բակալավրիատի նոր ուսումնական պլանների կազմման գործընթացի մասին հարցերը:

Ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոնային ծանրաբեռնվածությունը և նշեցին, որ ժամերի պակասման պատճառով փոփոխություններ կան:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումներին ֆակուլտետի մասնակցության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց, որ այդ միջոցառումներին ֆակուլտետը կմասնակցի 2019թ-ի միջազգային կոնֆերանսով: Նաև կգրվի ֆակուլտետի պատմությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց հավակնորդ ուսանողներին՝ Արշակյան Գևորգ, Աքիլյան Դավիթ և Գևորգյան Անահիտ:

Որոշեցին՝ Ամբիոններում դնել քննարկման և ներկայացնել թեկնածություն:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան